

СОИЯ

ԳԱՐԵՎԻՆ ՀԵՂԱՆԵԱՆ

ԳԵՎԳՈՒԹԻՒՆ
ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Հեղանկար.

(Պետականիվալա)

ԳԻՒՆ. Է 35 ԿՈՎ.

741
—
L - 44

Հ Յ Պ Ա Ր Ա Յ Հ
6093

741
լ-44

21 OCT 2010

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Կ Ա Զ Մ Ե Ց
ԳԵՐԵԳԻՑ ԼԵԽՈՆԵՑ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Միջին դասարանների համար.

Հ Ե Ռ Ա Ն Կ Ա Ր
(Գեղագիտական)

ԹԻՖԼԻՏ
Տպարան „ԱՊՈՒԱՇՈՎ“ Ընկ. Վելես. փ. № 18.
1909

02 MAY 2013

1835

ԵՐԿՐԻ ԽՈՍՔ

Դասագրքի Ա. մասով ծանօթացըինք գծագրութեան և նկարչութեան հիմքը կազմող տարրերին՝ զծերին, ձեւերին և երկրաշափական պարզ մարմիններին։ Տեսական այդ չափի պատրաստութիւն ունենալով, աշակերտներն այժմ ազատ կերպով կարող են նկարչութեան գործնական աւելի լուրջ պարապմունքներ սկսել։ Ներկայ Բ. մասն էլ գալիս է օժանդակ ձեռնարկ հանդիսանալու գծագրութեան և նկարչութեան անհրաժեշտ գիտելիքը կազմող հեռանկարի գաղափարը տալու, առանց որի հնարաւոր չէ կանոնաւոր և անսխալ նկարել։

Սակայն աչքի առաջ պէտք է ունենալ այն հանգամանքը, որ միայն դասագրքով չի կարելի նկարչութիւն սովորել, եթէ չկայ սէր դէպի առարկան, եռանդուն աշխատանք և, գոնէ, միջին չափի ընդունակութիւն։ Դասագիրքը կարող է միայն օժանդակ լինել, ուղղեցոյց լինել նկարչութեան։

Գ. Լ.



59267.66

§ 1. Ա՞նչ է հեռանկարը.

Բնականից նկարչութեան ժամանակ նկարելիք առարկան մենք մեր թղթի կամ կտաւի վրայ դուրս ենք բերում ոչ իրօք նրա մեծութեամբ, նրա երկրաշափական ճշառութեամբ ինչպէս որ կայ, այլ այնպէս, ինչպէս որ տեսնում ենք: Բնութիւնը տուել է մեր տեսողութեան այնպիսի ընդունակութիւն, որ մենք մեզ շրջապատող առարկաները տեսնում ենք փոքրացած, կրծատուած ձևով ու դիրքով և մի առարկայ այնքան աւելի փոքր է թւում մեզ, որքան հեռանում է մեր տեսողութիւնից: Բարձրակատար լեռներ, վիթխարի շէնքեր, աշտարակներ ու բարձրաբերձ գմբէթներ անդրադառնում, պատկերանում են մեր աչքերի մէջ իրենց ահազին մեծութեամբ հանդերձ: Դաշտում մեր խօսակից ընկերը մեզանից հեռանալով, հետզհետէ փոքրանում է և դառնում է մի սե կէտ' ու յետոյ արդէն իսպառ անհետանում: Շոգեկառքը մեզ մօտենալիս մենք լաւ նկատում ենք թէ ինչպէս հետզհետէ մեծանալով ահոելի է դառնում. Ահա այս բոլոր օրինակները ապացուցանում են հեռանկար կամ գոյութիւնը, ուրեմն՝

Հեռանկար կոչում է այն գիտովթինը, որի օրէնքներով որոշում ենք մեզանից հեռու առարկաների ինչ չափի փոքրացում՝ կամ կրծատում՝ իւ ինչ դիրք ընդունելը:

§ 2. Հեռանկարի բաժանումը.

Նկարչութեան մէջ իւրաքանչիւր առարկայ կամ

տեսարան արտայայտում ենք նախ գծերով, ապա սոռւերներով կամ գոյսերով։ Հեռանկարի օրէնքներին ենթարկւում են այդ բոլորն էլ. գծերը կրում են չափի և դիրքի փոփոխութիւն. իսկ սոռւերներն ու գոյսերը օղի պատճառով իրենց ոյժի կամ սաստկութեանդրա համար էլ՝

Հեռանկարը բաժանում է երկու մասի. զծարյին հեռանկար եւ օդային հեռանկար։

Ժանօլթ. Ընդհանուր կրթական դպրոցների համար կազմած մեր այս տարրական դասագրքի մէջ տեղ պէտք է բանէ միայն գ ծ ա-յ ի ն հ ե ռ ա ն կ ա ր ը։ Օդային աւելի կարեոր է նկարչական-մասնագիտական դըպրոցների համար։


Ա.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԵՌԱԿԱՐԻ ՄԷՋ.

§ 3. Հայեցակէտ։

Առհասարակ հայեցակէտ կոչւում է մարդու գըտնուած տեղը երբ դիտում է իր շրջապատը, իսկ հեռանկարի մէջ հայեցակէտը ուզգակի մեր աչքերն են, մեր տեսողութեան աղբիւրը։ Նայելիս՝ մեր տեսողութիւնը արձակւում է ճառագայթաձեւ, ուզգուած դէպի գիտելի առարկան և կոնաձեւ կերպով քանի գնում աւելի տարածւում է, գագաթ ընդունելով մեր հայեցակէտը. (տես ձև 1.) ուրիշն՝

Հայեցակէտը հետանկարի մէջ ծիշտ այն կէտըն է, որտեղ զանտում են մեր աչքերը նկարելիք առարկան դիտելիս։



ՁԵ 1.


Սովորաբար ուշագրութեան չի առնւում երկու աչքերի մէջ եղած տարածութիւնը, մանաւանդ երբ զիտելի առարկան գտնուում է բաւականաչափ հեռու։

§ 4. Տեսողութեան օրջան.

Հայեցակէտից դէպի դիտելի առարկան սեհուած տեսողութեան ժամանակ կոնաձև ճառագայթները շատ լայն են տարածւում և կազմում են մի մեծ շրջան։ Տեսողութեան առանցք կազմող ճառագայթը որ ամենակարծ գիծն է մեր հայեցակէտից մինչև առարկայի դիտելի կէտը, ամենից պարզ և զօրեղ է տեսնում, իսկ նրանից հետզհետէ հետացող ճառագայթները քանի զընում, այնքան աւելի ազօտ են տեսնում։ Օրինակի համար եթէ մեր՝ ուղիղ դէպի առաջ նայելիս, աջ կամ ձախ կողքից մի փայլուն առարկայ, կամ մի վառած մոմ բռնենք, առանց մեր գլուխը և աշքերը շարժելու կարող ենք տեսնել ազօտ կերպով։ Նոյնը կարող ենք փորձել մոմը վերև և ներքե բռնելով, սրանից պարզ երկում է, որ մենք տեսնում ենք շրջանաձև, կուրու տես ձև 2.) ուրեմն։

Մեր տեսողութեան ամրոջ շրջանաձև տարածութիւնը կոչում է տեսողութեան շրջան։

ա. Տեսողութեան շրջանը իր տարածութեան ընդարձակութեամբ անցնում է կիսագնդից, հասցնելով մոտ 200 աստիճանի։



Ձև 2.


բ. Այն ուղիղ գիծը որ հայեցակէտի վրայ է դանուում և տեսողութեան առանցքից աջ ու ձախ գնալով երկու ուղիղ անկիւն է կազմում, կոչւում է ակն ա գիծ։

§ 5. Պատկերային հարրուրիւն.

Նկարչութեան մէջ մեղանից պահանջւում է, որ մենք մեր նկարելիք առարկան կամ ամբողջ տեսարանը իր մօտաւոր և հեռաւոր դիրքերով դուրս բերենք թղթի կամ կտաւի վրայ ուսուցիկ, ուելքի կերպով, որ նկարը չըլինի տափակ ու անարտայայտիչ, այլ թողնի իսկականի տպաւորութիւն, զգացուի հեռուն և մօտիկը։ Այստեղ ահա մենք նկարելիք առարկայի և մեր հայեցակէտի մէջտեղը պէտք է երևակայենք ուղղահայեաց դիրք ուսնեցող մի հարթութիւն, որի վրայ իր ամբողջութեամբ անդրագառնայ, հաւաքուի, նկարելիք առարկայի կամ տեսարանի բոլոր մասերը։ Օրինակի համար երբ մեր դիմաց բռնենք մի հարթ ապակի ուղղահայեաց դիրքով, կըտեսնենք որ նկարելիք առարկան կամ տեսարանը ամբողջապէս հարթ և ուղղահայեաց դիրք ընդունելով երկում է ապակու մէջ և հեշտացնում մեր գործը նկարելու ժամանակ։ Ահա այդ ապակին այդ պէտքում կըլինի մեզ համար պատկերային հարթութիւն։ (տես ձև 3). ուրեմն։

Պատկերային հարթութիւն կոչում է այն երեսակային հարթ եւ ուղղահայեաց թափանցիկ հարթութիւնը, որ նկարելիս կանգնած է նկարողի եւ նկարելիք առարկայի միջին։

Հայելին նոյնպէս կարող է ծառայել որպէս պատմութիւն հարթ թութիւն, միայն ցոյց է տալիս հակառակ և անդրդարձ:




Ձհ 3.

§ 6. Տորիզօն.

Դիտենք որ աշխարհագրութեան մէջ և առհասարակ հորիզոն կոչւում է այն շրջապատ գիծը, որ դուրս մեր չորս կողմք դիտելիս, մեզ թւում է թէ երկիրը կողած է օդին (երկնքին), ինչպէս լեռների գագաթները, ծառերի կատարները, դաշտավայրի կամ ծովի հեռու սահմանը և այլն: Այլ է հորիզոնը հեռանկարի մէջ, այստեղ նա մտաւոր է, երեակայական է: Բնականից նկարչութեան ժամանակ շատ նշանաւոր գեր է խաղում այս հորիզոնը, թէ զանազան մեծ ու փոքր առարկաներ, թէ շինութիւններ և ամրող տեսարաններ նկարելիս մենք պէտք է անպատճառ ճանաչենք հորիզոնը: Այդ հորիզոնը նկարելի առարկայի կամ տեսարանի վրայ եղած այն ենթադրեալ հորիզոնական գիծն է, որ գտնուում է ուղիղ նկարողի աշքերի բարձրութեանը և նրա ակնազմին զուգահեռական: Հետեւապէս նկարողի դիրքից էլ կախուած է հորիզոնի:

բարձր և ցածր լինելը. եթէ մենք նստած ենք նկարում՝ մեր հորիզոնը աւելի ցածր կը լինի քան մեր կանգնած ժամանակ. իսկ եթէ մենք բարձրանանք աւելի բարձր տեղեր, պարզ է որ կը բարձրանայ և մեր հորիզոնը: (Տես ձհ 4).



Ձհ 4.

Նկարչութեան ժամանակ մեր հորիզոնի ուր լինելը որոշում ենք այսպէս: Նախ լաւ բռնում ենք մեր տեղը՝ նստած կամ կանգնած, յետոյ վերցնում ենք մեր ձեռքում մի փոքրիկ կարտոն, մի այցելամաս ու հորիզոնական գիրքով բռնում ենք մեր աշքերի առաջ այսպէս, որ այդ կարտոնը երեայ միայն մի գիծ, այսինքն նրա ոչ վերել տեսնենք, ոչ ներքել և դիմացի տեսարանի կամ առարկայի վրայ մտաւոր կերպով նշանակինք այդ գիծը, որ և կը լինի մեր հորիզոնի մէջ:

Հորիզոն կոչումը է այն հնմտավայի հորիզոնական գիծը, որ գտնում է նկարելիք տուարկայի շրջապատում՝ նկարողի աչքերի բարձրութեան իւ գուգարենուական:


Բացօղեայ լայնուարած տեսարաններ, դաշտ, ծով նկարելիս, շատ անգամ բնուկան հորիզոնը (աշխարհագրական) դառնում է մեղ նկարչական հորիզոն, այսինքն մեր աչքերի բարձրութեանն է երևում ծովի հետուոր սահմանը, դաշտի «ծայլը». իսկ աւելի հեռուն տեսնում ենք միայն այն տուարկանները, որոնք շատ բարձր են երկրի սակերերթից, ինչպէս ամպերը, լեռների կատարները և այլն: (Տես ձև 5):



Ձև 5.

Ծանօթութիւն: Երկրի գնդաձև լինելոց թէկ կարելի է ասել, որ ծովի հորիզոնական չէ այլ կոր է, հետեւապէս չի կարող մեր աչքերի բարձրութեանը լինել, բայց երկրի մեծութեան մօտ մեր տեսութեան սահմանն այնքան աննշան է, որ այդ գիծը կարող ենք հորիզոնական ընդունում են,

Տեսարաններ նկարելիս ընդունուած է հորիզոնը դնել պատկերի կէսից մի քիչ ցած, թէկ քիչ չէ պատահում տեսնել կէսից աւելի բարձր հորիզոն ունեցող պատկերներ: (Տես ձև 6).



Ձև 6.

Շրջագիծը մեր տեսողութեան շրջանն է.
Ուղղանկիւն պատկերացին հարթութիւնն է.
Հ. Հ գիծը հորիզոնն է:

§ 7. Տեսողութեան կենսունի.

Երբ մենք նկարելիք տուարկայի կամ տեսարանի հորիզոնը որոշեցինք, այսուհետեւ պէտք է գտնենք մեղ համար շատ կարևորութիւն ունեցող մի այլ կէտ, գա տեսողութեան կենտրոնն է: Տեսողութեան կենտրոնը գտնեում է հորիզոնի վրայ, ուղիղ մեր հայեցակետի գիմաց, մեր տեսողութեան առանցքի (գլխաւոր ձառագայթի) հանդիպած տեղը: Հեռանկարի մէջ այս կէտը խիստ մեծ նշանակութիւն ունի, դրա համար հարկաւոր է նրա տեղը որոշել շատ ճշտութեամբ: Տեսողութեան կենտրոնը որ կոչւում է նաև զլխաւոր

կէտ *), գտնում ենք այսպէս: Վերցնում ենք երկու կտոր փոքր կարտոններ (ալյետումներ կամ խաղաթը թեր) ու բռնում ենք մեր դիմաց՝ եզրները դէպի մեզ խաչաձև կերպով, այսինքն մէկը ուղղահայեց միւսը հորիզոնական, այնպէս, որ մենք դէպի նկարելիք առարկան նայելիս տեսնենք այդ կարտոնների միայն եզրները մի խաչ ձևացնող գծերով: Դիմացը հորիզոնի վրայ, այդ խաչուող գծերի միացած տեղի ուղղութեամբ որոշում ենք մեր տեսողութեան կենտրոնը: Կարելի է նոյնպէս մատիտը բռնել մեր դիմաց այնպէս որ նա ձևացնի մեր տեսողութեան առանցքը և մենք տեսնենք միայն նրա գլուխը. այդպիսով հորիզոնի վրայ կարող ենք մտաւոր կերպով նշանակել մեր տեսողութեան կենտրոնը: Ուրեմն հետանկարի մէջ:

Տեսողութեան կենտրոն կամ զիսաւոր կէտ կոչում է հորիզոնի վրայ եղած այն ենթադրեալ կէտը, որ գտնում է նկարողի հայեցակէտի ուղիղ դիմացը:

Եթէ նկարելիք առարկային կարելի է մօտենալ, լաւ է հենց մի սկ կէտով նշանակել այդ զիսաւոր կէտը. իսկ եթէ առարկան անմատչելի է կամ մի ամբողջ բնութեան տեսարան է, այն ժամանակ միայն մտաւոր կերպով պէտք է որոշել:

§ 8. Տարածութիւն.


Տարածութիւն (դիմացիա) հեռանկարի մէջ

*) Կոչումը է նուի ակնակէտ, գլазная точка, Augpunkt.

կոչումը է նկարողի և նկարելիք առարկայի մէջ եղած աղատ տարածութիւնը: Նկարելիք տեսարանի գէպի նկարողն եղած ամենամօտ մասը կոչում է պատկերի հիմքը կամ երկ ագիծ է: Յաճախ պատահում է, որ նկարողի մեր պատկերի մէջ դուրս ենք բերում մինչ նկարելիս մեր պատկերի մէջ դուրս ենք բերում մինչ մեր ուրբերին համառող գետինը կամ յատակը. այս չեն մեր ուրբերին համառող գետինը կամ յատակը. այս պիսի գէպի բնութիւնը ուրեմն տարածութիւնը համառում է պիսի գէպի բնութիւնը (ամենապակասին), և երբեմն էլ իսկ պառ վերանում է:

§ 9. Հեռակետեր.

Երբ մենք նկատում ենք որոշ առարկաներ կամ մի ամբողջ տեսարան, ոլէտք է իմանանք թէ մեր հայտնի յեցակէտը առնուազը որպիսի հոռաւորութիւն պիտի յենակէտը տեսողութեան կենտրոնից. այսինքն ամենառենայ տեսողութեան կենտրոնից. այսինքն ամենառենայ տեսողութիւն պիտի լինի մեր և առարկայի մէջտեղ, որ այդ առարկան կամ տեսարանը առարկայի մէջտեղ, որ այդ առարկան կամ տեսարանը մենք տեսնենք միանգամից իւր ամբողջութեամբ, առանց զիսաւորներս աջ և ձախ, վերև և ներքև շարժելու: Դրա համար հեռանկարն ունի որոշ օրէնքներ:




Զետ 7.

ա. Եթէ տեսողութեան կենտրոնը նկարելիք առարկայի կամ տեսարանի ուղիղ մեջտեղն է դանւում, այն ժամանակ մեր հեռաւորութիւնը (տարածութիւն) պէտք է լինի հաւասար նրա ուղղանկեան (պատկերացն հարթութեան) անկիւնագծին: (Տես ձև 7).

Բնդունենք թէ Ա, Բ, Գ, Դ ուղղանկիւնին մեր պատկերային հարթութեանն է. չ չ մեր հորիզոնը. Օ. տեսողութեան կենտրոնը Ն. նկարողի հայեցակէտը. սար Ա. գծին:

Բ. Եթէ տեսողութեան կենտրոնը մեր նկարելիք առարկայի ուղիղ մէջ տեղը չէ այլ աջ կամ ձախ է դանւում, նոյնպէս և հորիզոնը պատկերի կէսից բարձր կամ ցածր է, այն ժամանակ մեր հեռաւորութիւնը (տարածութիւն) պէտք է լինի հաւասար տեսողութեան կենտրոնից գէպի նկարելիք առարկայի ամենահեռաւոր կէտն ուղղուած գծի կրկնակ չափին: (Տես ձև 8).



Ձև 8.

Ըստունենք թէ Ա. Բ Գ Դ ուղղանկիւնին մեր պատկերային հարթութիւնն է, չ չ մեր հորիզոնը, Օ. տեսողութեան կենտրոնը և Ն. մեր դիրքը. ուրեմն պէտք է եղրակացնենք որ Օ. Ն. գիծը պէտք է լինի հաւասար չ Օ. Գ. -ի.

Այդ երկու դէպքումն էլ մենք հորիզոնի վրայ աջ և ձախ նշանակում ենք երկու կէտեր՝ հեռակէտեր, որոնց իւրաքանչիւրի հեռաւորութիւնը տեսողութեան կենտրոնից հաւասար պէտք է լինի՝ ա. դէպքում պատկերային հարթութեան անկիւնագծին, բ. դէպքում տեսողութեան կենտրոնից գէպի ամենահեռաւոր անկիւնը ձեւացող գծի կրկնակ չափին: Ուրեմն այս ամենից եղրակացնում ենք որ՝

Հեռակէտեր կրչում են տեսողութեան կենտրոնից աջ եւ ձախ զանուած այն կէտերը որոնց իւրաքանչիւրի հեռաւորութեան չափ (առնուագր) պէտք է կանգնենք մեր նկարելիք առարկայից, որպէս-զի մի հայեցարով տեսնենք իր ամրողութեամբ:

Լրացում.

ա. Հեռակէտերը միշտ զուրս են մնում պատկերային հարթութիւնից.


բ. Հեռակէտերը լինում են կամ հորիզոնի վրայ, կամ հորիզոնից բարձրացող և իջնող ուղղանայեցների վրայ:

գ. Երկու հեռակէտերի միջև եղած տարածութեան չափը հաւասար է հայեցակէտից գէպի տե-

2



սողութեան կենտրոնն ուղղուող գծի կը ը-
կնակի չափին: Ու Ռ=2 Ն 0. (տես ձև 9).
Դ. Երկու հեռակէտերի միջև եղած տարածութեան
չափը հաւասար է տեսողութեան կենդրոնին
գէպի պատկերային հարթութեան ամենահ-
սաւոր անկիւնն ուղղուող գծի ըստակի չա-
փին: Ու Ռ=4 0 Գ. (տես ձև 8):



Ձև 9.

- Երջագիծը՝ տեսողութեանն շրջանն է.
Հ. Հ. Հորիզոնն է.
Ա. Բ. Գ. Դ պատկերային հարթութեանը.
Ե. նկարողի հայցակէտն է.
Օ. տեսողութեան կենդրոնը.
Ա. Դ. պատկերի հիմքը կամ երկրագիծը.
Կ Կ ակնագիծը.
Ռ. Ռ. հեռակէտերը.
Ե. Օ տարածութիւն.

Ճանօնթ. Այս դասի վրայ ուսուցիչը
պէտք է կանգ առնի, մինչեւ որ բոլոր տեր-
մինները կը խրացնեն աշակերտները: Յար-
մար է հեռակէտերի բացատրութիւնը ցոյց
տալ գրատախտակի անկիւնագիծն օրինակ
առնելով:

§ 10. Խորութիւն.

Հեռանկարի մէջ խորութիւն կոչւում է պատկե-
րի կամ նկարի մէջ հետզհետէ հեռացող մասերի յա-
րաբերութիւնը. օրինակ եթէ տեսարան ենք նկարում,
ասում ենք որ մի և նոյն ուղիղ և միշտ հայեցակէտին
զուգահեռական գծի վրայ գտնուող առարկաները միե-
նոյն խորութիւնն ունին: Պարզ է ուրեմն որ
պատկերի մէջ մօտաւոր առարկաներից աւելի խոր
են հեռաւոր առարկաները: Օրինակի համար ձև 13-ի
մէջ երկաթուղու Ա. Բ. և Գ Դ գերանները միենոյն
խորութիւնն ունին:

Խորութիւնը, որ պատկերի հիմքից սկսուելով գնում
է մինչև հորիզոնը, սովորաբար բաժանում է երեք
մասի: Ամենամօտ առարկաները, որոնք հիմքն են կազ-
մում և կպած են երկրագծին, կոչւում է առաջին տե-
ղագիծ (պլան), մէջ աեղ եղած մասը միջին տեղագիծ,
իսկ այսուհետեւ մինչև հորիզոն կոչւում և յետին տե-
ղագիծ:

Բ.

ԳԾԵՐԸ ՀԵՇԱՆԿԱՐԻ ՄԵԶ.

Հեռանկարի ամենագլխաւոր և աչքի ընկնող օրէնքն այն է, որ ամեն մի առարկայ այնքան աւելի մեզ փոքր է թւում, որքան հեռանում է մեր տեսողութիւնից: Այս օրէնքի հիման վրայ փոքրացման կամ կը ճառատման են հնթարկում գծերը, ձեւեր և մարմինները:

ՈՒՂԻԴ ԳԾԵՐ.

Հեռանկարի մէջ ամեն մի ուղիղ գիծ կը ճառատւում է, եթէ գտնուում է ոչ անսիջապէս մեր տեսողութեան կենտրոնի վրայ և դէպի մեզ զուգահեռական այլ աջ կամ ձախ, վերև կամ ներքև. իսկ առաջին դէպքերում հնթարկում է միայն կը ճառատման ընդհանուր օրէնքին, նայելով իր հեռաւորութեանը:

§ 11. Աւզպահայեաց գծեր.

Իրենց զիբքը պահելով անփոփոխ, կը ճառատւում են երկարութեամբ, այսինքն քանի հեռանում են մեզանից, այնքան աւելի թւում են մեզ կը ճառատւած. կը ճառատուզ ուղղահայեաց գծերի զեղեցիկ օրինակ կառող են ծառայել մեզ հեռագրի սիները, (տես ձեւ 13). իսկ թէ ինչ չափով են կը ճառատւում և միմեանց մօտենում այդ մէկը միւսին յաջորդող գծերը, այդ մասին յետոյ:

Օանօթութ. Լուսանկար պատկերների մէջ երբ բարձր ու մեծ շինութիւններ են


նկարուած լինում, երբեմն պատահում են մեզ տեսնել ուղղահայեաց գծերը թէ հք ու ած. զա լուսանկարչական սխալ է. առաջ է գալիս նրանից, որ լուսանկարիչը հնարաւորութիւն չի ունենում իւր ֆոկուս ը բռնել շինութեան ուղիղ մէջ տեղը, այսինքն իւր մերենան տեղաւորցնել նկարելիք առարկայի կամ տեսարանի կենտրոնի դիմաց:

§ 12. Հորիզոնական գծերը

Կը ճառատւելով իրենց երկարութեամբ, փոխում են նաև իրենց զիբքը, այսինքն հորիզոնականութիւնից դառնում են թէ ք:

Եթէ մենք կանգնենք մի մեծ սենեակի ծայրում և նայենք դէպի միւս ծայրը, մեզ այնպէս կը թուի թէ առաստաղը հետզհետէ հեռանալով ցածրանում է, իսկ յատակը աւելի բարձրանում: Վերցնենք մի կտոր կարտօն ու բռնենք մեր հայեցակէտից բարձր և զետնին զուգահեռական՝ կը տեսնենք այդ կարտօնի մի երեսը (տակը). Եթէ բռնենք մեր աչքերից ցածր՝ կը տեսնենք նրա միւս երեսը (վերել). իսկ եթէ բռնենք ուղիղ՝ մեր աչքերի դիմաց, կը տեսնենք միայն մի հորիզոնական գիծ, որ միանում է մեր հորիզոնի հետ: (§ 6): Այս ամենից երեսում է որ բոլոր հորիզոնական գծերը իրենց շարունակութեամբ թեքւում են դէպի հորիզոնը, մեր հայեցակէտից բարձրը ցածրանալով՝ և ցածրը՝ բարձրանալով (տես ձեւ 11), այլ խօսքով բոլոր կը ճառատուզ հորիզոնական գծերի հեռակէտերը գտնւում են հորիզոնի վրայ: Պարզ է որ այն հորիզոնական գիծը, որը զուգահեռական է մեզ և արդէն գտնւում է

Հորիզոնի վրայ, նա պահում է իւր դիրքը, միայն կըր-
ճառում է (փոքր է երկում) իր հեռաւորութեան պատ-
ճառով:




Զե 10.

§ 13. Խելք գծեր.

Հեռանկարի մէջ կրճատուղ թեք գծերը պէտք է
բաժանել երկու կարգի. հետզհետէ բարձրացող գծեր և
հետզհետէ ցածրացող գծեր: Այն գծերը, որոնք հեռա-
նալով հետզհետէ բարձրանում են, նրանց հեռակէտերը

գտնուում է հորիզոնից բարձր. իսկ այն գլ-
ծերը որոնք հետզհետէ ցածրանում են՝ հորի-
զօնից ցածր: Կրճատուղ թեք գծերի հեռակէ-
տերը գտնելու համար պէտք է նախ նրա մի ծայրից
տերը գտնելու համար պէտք է նախ նրա մի ծայրից
տերը գտնելու համար պէտք է նախ նրա մի ծայրից
տերը գտնելու համար պէտք է նախ նրա մի ծայրից



Զե 11.

շելով կազմենք մի հռանկիւնի. յետոյ որոշենք այդ հո-
րիզօնական գծի հեռակէտը, որ անպատճառ կը լինի
(նայելով թէ մեր թեք գիծը դնալով բարձրանում է
թէ ցածրանում) կը գծենք մի ուղղահայեաց, որ թեք
գծի շարունակութեան հանդիպած ակդում կը որոշի
նրա հեռակէտը: (Տես ձև 11):


Օրինակի համար եթէ ուզում ենք իմանալ ԱԲ և
ԳԻ բարձրացող կամ ԱԵ և ԳԶ ցածրացող թեք գծերի
հորիզօնական գծերի հեռակէտերը որ է Յ կէտը ՀՀ
հորիզօնի վրայ, այնուհետեւ պէտք է Յ. կէտից գծենք
մի ուղղահայեաց, որի ծայրերին մեր թեք գծերի շա-
տ երը:

Նկարչութեան մէջ թեք գծերի պատճելիս առե-
լի ևս աչքի չափն է զործ տեսնում և քիչ են դիմում
այս գժուարին կանոնին, մասնաւանդ որ հեռակէտերը
շատ են հեռանում պատճերի սահմաններից:
Նպատակայարմար է նկարիլիս սկսել ուղղահա-
յեաց և հորիզօնական գծերից, ապա թեք գծերը՝ նը-
թիւնն աչքի առաջ ունենալով:

§ 14. Չուզահեռական գծեր.

Ինչպէս զիտենք արդէն, ուզիդ գծերի մէջ ուղ-
ղահայեաց զիրք ունեցողները չեն փոխում իրենց նոյն
դիրքը (§ 11) ուրեմն խօսքը այսակող հորիզօնական
և թեք զուգահեռականների մասին է,
Այն զուգահեռական գծերը, որոնք զ ու ւ գ ա հ ե-
ա կ ա ն ե ն նոյնպէս մեր պատճերային հարթու-


թեան, (այսինքն մեզ մեր ակնագծին) և գտնուում են
են ուզիդ մեր տեսողութեան կենտրոնի վրայ, կամ
շատ մօտ, իրենց զ ի թ ք ո վ մնում են անփոփոխ: Խոկ
այն զուգահեռական գծերը որոնք զ ու ւ գ ա հ ե ա ա-
պա կ ա ն չ ե ն մեր ակնագծին և մեր տեսողու-
թեան կենտրոնից բաւական հեռու են կանգնած, փո-
թեան իրենց զիրքը, հետզհետէ նեղանում են իրենց
շարունակութեամբ միանում են հորիզօնի մի կէտում:
Այդ կէտը կոչւում է միացման կէտ: Միացման կէտը
ընկնում է մեր տեսողութեան կենտրոնի վրայ և կոչ-
ուում է զ լ ի ա ւ ո ր մ ի ա ց մ ա ն կ է տ, եթէ զու-
գահեռական գծերը զնում են մեր տեսողութեան զրլ-
գահեռական գծերը զնում են մեր տեսողութեան կոչ-
ման: (Տես ձև 12 ա.): բ. Միացման կէտը ընկնում է
մեր տեսողութեան կենտրոնից աջ կամ ձախ և կոչ-
ում է պ ա տ ա հ ա կ ա ն մ ի ա ց մ ա ն կ է տ, եթէ
զուգահեռական գծերը զուգահեռական չեն մեր տեսո-
ղութեան առանցքին: (Տես ձև 12 բ.):



Ձև 12.

Երբ զուգահեռական գծերը միմեանց միացած են
լինում ուրիշ զուգահեռական գծերով, գլխաւոր զու-
գահեռական գծերի լրձատման հետ կրծատման են են-
դահեռական գծերի լրձատման համապատասխան են:

Թարկւում և այլ գծերը: Նրանք միշտ մնալով դէպի
մեզ (մեր ակնագծին) զուգահեռական, կրծատւում են
իրենց երկարութիւնից և քանի գնում, այնքան մօտե-
նում են միմեանց: Լաւ օրինակ կարող են ծառայել
այս խնդրում երկաթուղու գծերը իրենց մէջտեղի զու-
գահեռական գերաններով, կամ հեռագրալարերը իրենց
սիւներով. (տես ձև 13).



Ձև 13.

Իսկ երբ զուգահեռական գծերը թեք են **[ինում]**
դէպի ներքեւ կամ վերև նեացող, հեթարկւում են
թեք գծերի կրծատման օրէնքին, միացման կէտ ընդու-
նում նորիգուից ներքեւ կամ վերև, նայելով նրանց
ուղղութեան: (Տես § 13).

Պ.

Չեիերը չե՛ԱՆԿԱՐԻ Մէջ.


Մեր այս տարրական ձեռնարկի մէջ
բաւարար ենք համարում յիշել միայն կ ա-
ն ո ն ա ւ ո ր ձևերից չորսը—քառակուսին,
ուղանկիւնին և վեցանկիւն բազմանկիւնին.
իսկ կոր ձևերից՝ արջանը:

§ 15. Քառակուսի.

Վերցնենք մի քառակուսի ձև՝ կարտոնից կտրած,
և ուղղանայեաց զիրքով բանենք մեր դիմաց այնպէս,
որ նրա երեսներից մէկը լինի մեզ զուգահեռական:
Այս դէպքում կը տեսնենք քառակուսին իր երկրաչա-
փական ճշտութեամբ, ուղիղ անկիւններով և հաւա-
սար կողմերով և այդ զիրքով որքան էլ որ հեռացնենք
մեր հայեցակարգ քառակուսին փոքրանալով գարձեալ
կը պահի իր համաչափ ճշտութիւնը, այսինքն կողմերի
և անկիւնների հաւասարութիւնը: (Ձև 14, ա.):

Այժմ այն քառակուսին պահելով նոյն ուղղանա-
յեաց զիրքով, նրա մի կողմը, օր. Գ. Գ. (ձև 14 բ.)
տանինք դէպի յետ, աւելի հեռու (խոր.). Բնչ կը տես-
նենք, հեռանկարի օրէնքով հեռու գնացող զիծը պէտք
է կրծատուի: Այժմ կը պատահի մեր քառա-
կուսու հետ: Նրա Գ. Գ. կողմը մեզ կը թւի կարև,
քան Ա. Բ կողմը: Այդ զետ բոլորը չեն մենք զիտենք
որ բոլոր հորիզոնական գծերը իրենց հեռանալով ոչ
միայն կրծատւում են, այլ և փոխում են իրենց զիրքը,

Թեքում են դէպի հորիզոնը (§ 12, նոյնը պատահում է այստեղ մեր քառակուսու հետ, նրա ԲԳ և ԱԴ (ձև 14 ա.), զառնում են ԲԳ և ԱԴ (ձև 14 բ.): Եթէ մենք շարունակենք աւելի եռ հեռացնել ԳԴ, կողմը աւելի խիստ կրճատուելով հանդերձ աւելի կը թեքուեն դէպի հորիզոն: (Տես ձև 14 գ.):




Ձև 14.

Հասկանալի է որ նոյնը կը պատահի քառակուսու հետ, եթէ մենք նրա միւս կողմերի հետ այսպէս փարուենք, ինչպէս այստեղ Գ. Դ. Կողմի հետ: Ի՞նչպէս են որոշում խոկոթեամբ քառակուսու կրճատումը:

Եսթաղբենք թէ մեզ տրուած է ԱԲԳԴ քառակուսին (ձև 15) և պահանջում է գծել նրա հեռանկարչական տեսքը: Ամենից առաջ մենք նշանակում ենք մեր հորիզոնը ՀՀ, և Օ տեսողութեան կենտրոնը, յետոյ գծում ենք մեր պատկերային հարթութիւնը՝ ԵԶԵԼ, և նրա անկիւնագծի չափով հորիզոնի վրայ նշանակում ենք Ռ. Ու հեռակէտերը: Երբ այդ ամենը պատրաստ է, պատկերային հարթութեան ներքինի գծի վրայ պէտք է վերցնենք մեր քառակուսու կողմին հաւասար ա. դ գիծը: այդ գծի ձայրերը պէտք է միացնենք կէտաւոր


գծերով տեսողութեան կենտրոնի և հեռակէտերի հետ: Կէտաւոր գծերի միմեանց հանդիպած տեղից գծելով բգ. զուգահեռական գիծը, կը ստանանք պահանջուած քառակուսին:



Ձև 15.

Եթէ մեզ տրուած է մի քառակուսի, որի ոչ թէ մի կողմն է մեզ ուղղած այլ անկիւններից մինը, նրա հեռանկարչական ձևը որոշում ենք այսպէս:

Վերցնում ենք նրան դէպի հորիզոնը զուգահեռական գիրք ունեցող անկիւնագիծը Ա. Գ (տես ձև 16): բաժանում ենք ուղիղ երկու մասի, և նրա մէջտեղից գծում ենք դէպի տեսողութեան կենտրոնը Օ Հ գիծը, որ ձևացնում է մեր որոնելի քառակուսի անկիւնագիծը: Յետոյ հորիզոնի վրայ նշանում միւս անկիւնագիծը: Յետոյ հորիզոնի վրայ նշանակելով հեռակէտերը Ա.Գ. գծի երկու ծայրերը միացնակէտերը հեռակէտերը Ե.Դ. գծի երկու ծայրերը միանանկարչական հանդիպած տեղերով կը կազմեն մեր հեռանկարչական ԱԿԳ. քառակուսին:




Զե 16.

§ 16. Ուղղանկիւնի.

Ուղղանկիւն քառանկիւնու հեռանկարչական տեսքը որոշում ենք այսպէս: Նրա կարձ կողմին հաւասար գիծ վերցնելով մեր պատկերային հարթութեան երկրագծին, այդ գծի երկու ծայրերը միացնում ենք տեսզութեան կենտրոնին ինչպէս որ քառակուսու ժամանակ. այդպիսով ստանում ենք մեր որոնելի ուղղանկունու երկու երկար կողմերի գիրքը. իսկ նրանց երկարութիւնը և դիմացի կրծառուող կողմի տեղը մենք որոշում ենք այսպէս: Վերցնում ենք կարկինը, և նրա օգնութեամբ մեր ուղղանկունու երկար կողմերը նշանակում ենք երկրագծի վրայ և ապա այդ կէտերը միացնելով երկու կողմի հեռակէտերի, կենտրոն գնացող գծերին հանդիպած տեղում կը գծենք մի գիծ որ և կստանանք մեր ուղղանկիւնու հեռանկարչական տեսքը:

Իսկ երբ մեր տեսողութեան կենտրոնը լինում է պատկերային հարթութեան ոչ մէջ տեղը այլ մի կողմէ, օրինակի համար աջ, այն ժամանակ վարւում ենք այսպէս:

Նշանակելով պատկերային հարթութեան ներքին գծին (երկրագծին, մեր Ա.ԲԳԴ ուղանկիւնու (Ճկ 17) թի, կարձ կողմը, միացնում ենք նրա երկու ծայրը Բ. տեսողութեան կենտրոնին: Յետոյ կարկինով ԲԱ. և Գ. գծերի չափով երկրագծի վրայ ստանալով ԵԶ կէտերը, միացնում ենք այդ կէտերը ձախ կողմի Ռ հեռակէտի հետ, որ և կենտրոն գնացող գծերի հանդիպած տեղում կը որոշի կը գծի գիրքը տալով մեր ուղղանկիւնու Ա.ԲԳԴ կը հեռանկարչական տեսքը:




Զե 17.


§ 17. Տրումի.

Որովհետեւ ամեն մի շրջան կարելի է գծել քառակուսու մէջ, դրա համար էլ հեռանկարի մէջ շրջանինչ Ճկ լնդունելը որոշում է քառակուսու օգնութիւնը և լուսական առանձին պատճենը:

թեամբ: Ընդունենք թէ մեր առաջ զրւած է մի շրջան և պահանջւում է խմանալ նրա հեռանկարչական տեսքը: Նախ պէտք է մեր շրջանը տեղաւորենք իւր համեմատ մի քառակուսու մէջ (Ձև 18) յետոյ քաշենք այդ քառակուսու անկիւնագծերը. ապա քառակուսու կողմերը երկու հաւասար մասերի բաժանենք մէջտեղից մէ ուղղայիշաց և մի հորիզոնական դիմ քաշենք, որոնք, պարզ է որ, խաչուելով կանցնեն կենտրոնից: Այսուշ հետեւ անկիւնագծերի շրջագծին հանդիպած տեղերից պէտք է գծենք քառակուսու կողմերի զուգահեռական չորս գծեր որ և կստացուի մի ցանց իւր մէջ առած շրջանին (Ձև 18 ա.): Երբ այս ցանցը պատրաստ է, պէտք է նախ հեռանկարչական տեսքի բերենք քառակուսին (Ձև 15) այսուհետև միջի ուղղայիշաց գծերը նոյնպէս պէտք է միացնենք տեսողութեան կենտրոնին և յարաքերաբար գծենք հորիզոնականները. կստացուի մեր ցանցը հեռանկարչական ձևով, որի վրայ արդէն հեշտ կը լինի գծել շրջանը: (Ձև 18 բ.):




Ձև 18.



Ա.

Նոյն այս հիման վրայ կարող ենք գծել և համակենտրոն շրջանների հեռանկարչական տեսքը: Իսկ պէտք որ վարուեցինք մի շրջանի հետ, նոյնը կը վար-

ուենք այստեղ երկուսի հետ, ընդունելով նախապէս երկու քառակուսի և վերածելով նրանց վերոյիշեալ կանոնների կրծատման: (Ձև 19, ա. բ.):



բ.


Ձև 19.

ա.

§ 18. Կանոնական քազմանկիւնիներ.

Մենք գիտենք որ ամեն մի կանոնաւոր բազմանկիւնի կարելի է ներգծել շրջանի մէջ: Ուրեմն երբ պէտք լինի մի հաւասարակողմ բազմանկիւնու հեռանկարչական ձևը գծել պէտք է նախ հեռանկարի վերածենք շրջանը ու այսուհետև պահանջուած թուով մասերի բաժանելով, օր. 6, 8 և այլն, ստանանք հարկաւոր գծանկարը:

Շրջանի ցանցը արդէն մեղ օգնում է բազմանկիւնին հեշտութեամբ նշանակելու իւր կրծատուող կողմերով:




բ.

Ձև 20.


ա.

§ 19. Աւենդակաւոր ցանց.


Եթք մենք մի որևէ նկար կամ գծանկար ուզում ենք իւր իսկական դիրքից վերածել հեռանկարչական տեսքի, պէտք է օգտուենք վանդակաւոր ցանցով: Ենթադրենք թէ տուած է մեղ մի գծանկար (ձև 21 ա.) և պահանջում է նրա հեռանկարչական տեսքը: Նախ և առաջ այդ նկառը առնում ենք իր յարմար ձեր մէջ, քառակուսի, ուղղանկիւնի, բազմանկիւնի շրջան և այլն, յետոյ մենք գծում ենք վանդակաւոր ցանց, հաւասարաչափ վանդակներով, քառակուսի գէպքում, օրինակի համար $8 \times 8 = 64$ վանդակ, և ապա վերածում ենք հեռանկարի այսպէս: Վերևում նշանակում ենք մեր հորիզոնը և տեսողութեան կենտրոնը, մեր գծանկարի ստորին գծի բոլոր վանդակների գծերը միացնենք տեսողութեան կենտրոնին, ապա հորիզոնի վրայ աջ և ձախ նշանակելով հեռակէտերը, նոյն ստորին գծի կէտերից թեք գծերով միացնում ենք հեռակէտերին, որ և կըստացուի մեր վանդակաւոր ցանցը, (64 վանդակներով ձև 21 գ.) հեռանկարչական տես-



m.



Ձև 21.



p.

քով: Այսուհետեւ այդ ցանցի վրայ կը նկարենք մեղ տուած գծանկարը:

իսկ երբ մի նկար կամ գծանկար ուզում ենք մի քանի անգամ մեծացրած կամ փոքրացրած դիրքով վերածել հեռանկարչական տեսքի, պարզ է որ դեռ վերածել համաչափ մասշտաբով մեր վանդասկզբից պէտք է համաչափ մասշտաբով, ապա կաւոր ցանցը մեծացնենք կամ փոքրացնենք, ապա կաւոր ցանցը մեծացնենք պէտք է հնչպէս ինչպէս, տեսանք վերևում:


Պ.

ՄԱՐՄԻՆԵՐԸ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՄԷՋ

§ 20. Խորանարդ.

Եթէ խորանարդը բռնենք ուղիղ մեր հայեցակէտի դիմաց այնպէս, որ նրա կողմերից մինը լինի մեղ զուգահեռական, մենք կը տեսնենք միայն նրա այդ կողմը, մի երեսը, այսինքն մի քառակուսի (ձև 22 ա.): Հէնց որ խորանարդը շարժեցինք աջ կամ ձախ, վերև կամ ներքև մենք կը տեսնենք նրա երկու կամ երեք կողմերը, բայց կը տեսնենք ոչ իսկական քառակուսածած շեղանկիւն կամ սեղանակիրար: (Ձև 22 բ. գ. դ. ե. զ. է.): Այստեղից պարզ երեսմէ է մեր արդէն բը (որոնցից և կազմուած են կողմերը) փոքրանում առուելով հանդերձ պահում են իրենց զիրքը, գ. որ հոգիրքը, թեքւում են գէպի հորիզոն, միանալով տեսնթաղբենը թէ մեր առաջ, հորիզոնի ուղիղ մէջ՝ տեղը, հայեցակէտից գէպի աջ դրւած է մի խորանարդը, ինչպէս ճշտութեամբ որոշենք նրա հեռանկար տեսքը:

Ենթաղբենք թէ մեր առաջ, հորիզոնի ուղիղ մէջ՝ տեղը, հայեցակէտից գէպի աջ դրւած է մի խորանարդը, ինչպէս ճշտութեամբ որոշենք նրա հեռանկար:




Ձև 22.

Մենք նախ պէտք է գտնենք նրա հիմք-քառակուսուու հեռանկարչական ձեւը (§ 15) տես ձև 23 ա. յետոյ նրա առաջին գծի վրայ պէտք է կանգնեցնենք մի այլ քառակուսի, մեր երկարչափական քառակուսու բարձրութեան, այդ քառակուսու վերին անկիւններն էլ պէտք է նոյնպէս միացնենք տեսողութեան կենտրոնին: Մնում է որ հիմք-քառակուսու միւս անկիւնները ուղղահայեցներ բարձրացնենք մինչև կենտրոն գնացող գծերի հանդիպումը և այդտեղից միացնենք երկու ուղղահայեցները մի հորիզոնական գծով որ և կը ստացուի մեր հեռանկարչական խորանարդը. (տես ձև 23 բ.):

§ 21. Հատուածակարմ.

Ինչպէս քառանկիւն հատուածակողմը, անպէս էլ այլ տեսակի հատուածակողմերը, ինչպէս և ուղղան-




կիւն հատուածանիստը հեռանկարչական տեսքի վերածում են դարձեալ քառակուսու, բազմանկիւնու և ուղղանկիւնու կանոններով: Օր. քառանկիւն հատուածակողմի համար պէտք է հեռանկարչական տեսքի դարձնեաք նախ հիմք-քառակուսին, նրա անկիւններից ուղղանյեցներ կանցնեցնեաք և վերեի անկիւնները միացնելով տեսողութեան կենտրոնին, որոշեաք միւս կողմերը ինչպէս որ արինք խորանարդի ժամանակ:

§ 22. Թուրք.

Թէ քառանկիւն և թէ բազմանկիւն բուրգի նկարչական տեսքը որոշում են նոյն մարմինները կազմող երկրաչափական ձևերի օգնութեամբ: Որոշում են բուրգի հիմք կազմող ձևի հեռանկարը. մէջտեղից մի ուղղանյեց են կանցնեցնում պէտք եղած բարձրութեան զագաթը որոշելու, և այնտեղից գծերը բերում միացնում են հիմքի անկիւններին, որ ստացւում է բուրգի հեռանկարչական տեսքը: Օրինակի համար ենթադրեաք թէ մենք գծել ենք արդէն մեր վեցանկիւն


բուրգի հիմքը, այսինքն կանոնաւոր 6-անկիւն բազմանկիւնու կրծատուած տեսքը, կանցնեցնում ենք նրա կենտրոնից մի ուղղանյեց բուրգի երկրաչափական բարձրութեան ու նրա վերին ծայրից գծեր ենք միացնում բազմանկիւնու անկիւններին, որ և ստանում ենք ուղիղ կանցնած վեցանկիւն բուրգի հեռանկարչական տեսքը: Զե 24:



§ 23. Գլան.

Գլանի հեռանկարչական տեսքը գտնելը կախուած է նրա հիմքը և վերեի մասը կազմող շրջանների կըրճատ տեսքը և միմեանցից ունեցած հեռաւորութիւնը գտնելուց: Դրա համար նախ պէտք է որոշեաք մեր գլանի զիրքն ունեցող մի հաւասարաչափ քառանկիւն հատուածակողմի հեռանկարչական տեսքը, և այսուհետեւ նրա հիմքի և վերեի քառակուսինների վրայ գծերով երկու շրջաններ միացնեաք ուղիղ գծերով: (Զե 25 ա.):

Եթէ գլանը պառկած է այնպէս, որ նրա մի գլուխը մօտ է մեզ միւսը հեռու, պարզ է որ ստացին շրջանը մեծ կը լինի քան երկորդը որ հեռու է: (Տես ձե 25 բ.):




ա.

Զհ 25.

ր.

Լրացում.

Շրջան, ինչպէս և կանոնաւոր բաղմանկիւնիներ հիմք ունեցող մարմինները եթէ մեր հորիզոնից բարձր են, հիմքի գիծը դէպի վեր է կորանում, իսկ երբ հորիզոնից ցածր են՝ դէպի ներքի. հորիզոնին հաւասար դէպքում հիմքի գիծը կը երկայ ուղիղ, հորիզոնական։ Ահա օրինակ կոնսածի գմբէթը երեք դիրքով. ձկ 28:



Զհ 26.

Ը.


ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Ժամանթութիւն, երկրաչափական գլխաւոր մարմինների հետանկարը սովորելով, մենք հեշտութեամբ կը կարողանանք նկարել զանազան առարկաներ առանձին վերցրած, իւրաքանչիւրը նրանցից մէկի կամ միւսի մօտաւոր ձևին յարմարեցնելով, օր. տուն, գմբէթ, աշտարակ, սեղան, աթոռ և այլն. իսկ ամբողջ տեսարաններ, շինութեան ներսւուր և այլ հաւաքական առարկաներ նկարելու համար կարեոր է նաև հետեւելլը։

§ 24. ՍԵՐԵՆԱԿԻ ԽԵՆԱՑԻԼՈՎՐ.


Մանենք մի ուղանկիւնի ընդարձակ սենեակ (որ խորանարդի կամ հատուածանխոտի ձև ունի) կանգնենք նրա մի պատի մէջտեղը և նայենք դէպի առաջ։—Ի՞նչ կտեսնենք։ Դիմացի պատը, ինչպէս և աջ և ձախ կողմի պատերը որպէս, ուղղահայեաց ձևեր, իրենց դիրքը չեն փոխում, միայն վերջիններս առաստաղի և յատակի հետ քանի հետանում, այնքան աւելի նեղանում, մօտենում են միմեանց և փոքրացընում դիմացի պատը։ Մենք գիտենք արդէն որ բոլոր մեզանից ուղղանկիւն հեռացող զուգահեռական գծերը գնում են դէպի հորիզոն, դէպի տեսողութնան կենտրոնը (§ 14.) նոյնը պատահում է և այսուղ եթէ

մենք նշանակենք սենեակի մէջ մեր հորիզոնը և տեսողութեան կենտրոնը, կը տեսնենք որ բոլոր այդպիսի զուգահեռական գծերը, առաստաղի, յատակի, պատերի, դոների, լուսամուտների գծերը գնում միանում են տեսողութեան կենտրոնին: (Տես ձև 27 ա.):



Ձև 27 թ. նոյն սենեակն է, տեսողութեան կենտրոնը վերցրած ոչ մէջտեղը, այլ դէպի ձախ, այսինքն երբ մենք կանգնած կլինենք ձախակողմեան պատին աւելի մօտ:

Կրճատման նոյն օրէնքներին է ենթարկում եթէ մենք ուղինանք նկարել մի կամարակապ մեծ սրան կամ սինազարդ զաւիթ: (Տես ձև 28 ա. թ.):



§ 25. Փողոցի հեռանկար.

Երբ ուզում ենք փողոցի ամբողջ տեսքը երկշարք տներով ու բոլոր մանրամասնութիւններով նկարել հեռանկարչական հշտութեամբ, պէտք է ի նկատի ունենանք երեր դէպք, թէ փողոցի մակերեսոյթը հորիզոնական է, բարձրանում է (զարիվեր), թէ ցածրանում է (զարիվայր) մեր կանգնած տեղից, և ինչպէս որ է, նոյն գիրքի գծերի հեռանկարչական օրէնքներով էլ առաջնորդուելու հնք: Այսինքն ա) եթէ փողոցը հորիզոնական է, մենք մեր տեսողութեան կենտրոնի հետ զնական է, պէտք է դնենք հորիզոնի վրայ, բ) եթէ ցածրանում է հեռակէտերն էլ պէտք է դնենք հորիզոնի վրաձր, գ) եթէ ցածրանում է լինեն հորիզոնի վիճեն ցածր քան հորիզոնը. (տես § 14): Տներ, զանազան շինքեր իրենց լուսամուտներով ու դոներով, ծառեր, մարդիկ ինչ որ կան նկարելիք փողոցում, իրենց հորիզոնական, ուղղահանկարելիք փողոցում, իրենց հորիզոնական, նոյն կանոններին յեաց և թեք գծերով կենթարկուեն նոյն կանոններին: Ինչ որ այդպիսի գծերը (§ 11—14): Ահա օրինակներ:

ա. Փողոցի մակերեսոյթը հորիզոնական է.

Մեր հորիզոնը, տեսողութեան կենտրոնը և հեռակէտերը որոշելուց յետոյ, բոլոր մեր տեսողութեան առանցքին զուգահեռական գծերը կը միացնենք տեսողութեան կենտրոնին և կը ստանանք մեր փողոցի ձիշտ հեռանկարը. (ձև 29):


բ. Փողոցի մակերեսոյթը թեք է՝ դէպի վեր.

Մեր հորիզոնը այս անգամ կը լինի զիմացի գետանի վրայ, հեռակէտերը կը լինեն հորիզոնից բարձեանի վրայ, հարձեալ բնլոր մեզնից հեռացող զուգահեռական ձըր.

զծերը զնում էն տեսողութեան կենարոն։ Եթէ աները մի ուղիղ գծի վրայ չեն շինուած, այն ժամանակ աւելի լաւ է իւրաքանչիւր տան զծերն առանձին որոշել։ (Զհ 30):

Գ. Փողոցի մակերեւոյթը թեր է՝ դէպի զար.

Մեր հորիզոնը այս անգամ նկարի մէջ կը լինի շատ բարձր և զրա համար էլ տեսողութեան կենարոն գնացող հորիզոնական զծերը մեծ մասամբ բարձրանում էն։ Երևոմ էն հեռաւոր շէնքերի կտուրները։ Հեռակէտերը կը լինեն հորիզոնից ցածր։ Փողոցի այս դիրքի նկարելը իւր հեռանկարչական ամեն ճշութեամբ համեմատաբար աւելի դժուար է։ (Զհ 31):



Զհ 29

31

30

Այստեղ երեք դէպրումն էլ մենք մեր տեսողութեան կենարոնը վերցրինք հորիզոնի ուղիղ մէջտեղը, այսինքն մեր հայեցակէտը բանեցինք, (մենք կանգնեցինք) ուղիղ փողոցի մէջտեղը։ Իսկ եթէ նկարելիս կանգնենք այս կամ այն կողմը, ձախ կամ աջ, փողոցի հեռանկարն էլ իր երկշարք տներով այն փոփոխութիւնը կը կրի, ինչ որ սենհակի հեռանկարը, իր երկկողմի պատերով, այսինքն այն պատը (կամ պատերի շարքը) տեսի խիստ կը կրծատուի, որին աւելի մօտ ենք կանգնած։ (Զհ 27 ը.):


Տ 26. Հեռանկարի մասօտաբը.

Հեռանկարի մէջ մասշտաբը, չափագիծը, այն ծառայութիւն է անում մեզ, որ մենք կարողանում ենք մեր նկարի կամ պատկերի մէջ մեր ցանկացած մեծութեան առարկայի հեռանկարչական տեսքն ստանալ։ Ենթադրենք մի առարկայ պատկերի սկզբում, հիմքում կամ կողմերում ունի դիցուք պայմանաւորուած 4 արշին երկարութիւն։ Մենք պէտք է ուրեմն կարողանանք որոշել ինչ չափի կամ մեծութեան կերպի նոյն այդ առարկան, պատկերի զանազան մասերում, զանազան խորութեամբ։

Վերցնենք մի ուղղահայեց փայտ, օր. հեռագրական սինը, և նրան մեր պատկերի եզրում ընդունենք 4 արշին մեր մասշտաբով, այժմ որպէսզի իմանանք թէ հետզհետէ մեզնից հեռացող հեռագրի սիները, որոնք իսկապէս միմեանց հաւասար են, պատկերի մէջ, ինչ երկարութիւն և հեռաւորութիւն կունենան, վարվում ենք այսպէս։

Մեր նկարի ուղղահայեց կողմերից մէկում, ԱԲ (Ճհ 32), նշանակում ենք մեր մասշտաբով 4

արշին երկարութիւն ունեցող մի զիծ Ա.Բ., այդ զիծ
երկու ծայրերը միացնում ենք տեսողութեան կենտ-
րոնին, յետոյ պատկերի հիմք-զծի Ա.Դ վրայ նշանա-
կում ենք կէտեր այն հեռաւորութեամբ, ինչպիսի հե-
ռաւորութեան որ ուզում ենք ունենալ այդ սիւները.
յետոյ այդ կէտերը միացնում ենք Ռ. հեռակէտին, որ
և կենտրոն գնացող հանդիպած տեղերում որոշում ենք
մեր սիւների տեղերը:



24 32.


Նոյն այս ձևով ենք որոշում՝ զանազան հաւասար հեռաւորութիւն և բարձրութիւն ունեցող սիւների, կամարակապ շէնքերի, պատշգամիների հեռանկարչական տեսքը:

Իսկ եթէ որոշ խորութեան մէջ մենք ուզում ենք
շարժել որևէ՝ մեզ իր մասշտաբով ծանօթ՝ ուղղահայեաց
առարկայ, դէպի աջ կամ ձախ, այնպէս որ չը փոխուի
նրա մեծութիւնը, մենք այդ առարկայի երկու ծայրե-
րից հորիզոնական գծեր ենք քաշում դէպի այն կողմը
որտեղ ուզում ենք տեղափոխել, և շարժելով այդ զու-

գարենական զծերի մէջ, տեղաւորում են ցանկացած կտակի վըայ:

Ապա այս կանոնները գիտենալով մասնաւոր մեջ մեր ցանկացած տռարկան որոշ մասշտաբով տեղաւորել պատկերի մէջ ամեն տեղ, ուր որ ուղենանք:


Օրինակ վերցնենք մարդը:
Ըսդունենք թէ Ա. Բ. Գ. Դ (ձև 33) մեր պատկերն
և Հ հորիզոնը, պատկերի զանազան մասերում մար-
տեղը (հասակը, բարձրութիւնը) որոշելու համար
արի ի ուղղահայեց կողմում նշանակում ենք նրա
տաւոր բարձրութիւնը դիցուք $2^{1/4}$ արշին մեր ցան-
ցած մասուտարով. ապա միացնում ենք այդ գծի եր-
ւ ծայրելը տեսողութեան կինտրոնին, որով որու-
մ ենք նոյն չափահաս մարդու հասակը պատկերի
մեջ խորութեամ մէջ, մինչև հորիզոնը. իսկ երբ ու-
նանանք պատկերի ալ տեղեր շարժել նոյն չափի
արդուն, վարւում ենք այնպէս, ինչպէս հեռագրական
իւների հետ, այսինքն նրա երկու ծայրից (մարդու
լինից և ոտքերից) գծում ենք հորիզոնական գուգա-



Qh 33.

հեռականներ գէպի աջ կամ ձախ, որ որ կամենանք,
և այդ գծերի մէջտեղում՝ կը տեղաւորենք մարդուն,
ինչ կէտում որ ուղենանք:

Եթէ մեր պատկերի հորիզոնը վերցնում ենք մեր
որոշելիք ուղղահայեաց առարկայի բարձրութեան, այն
ժամանակ բոլոր մինոյն հորիզոնական մակերեսիթի
վրայ գրուած նոյն հասակի մարդկանց զլուխները
պէտք է լինեն հորիզոնին հաւասար, ինչ խորութեամբ
էլ որ նրանք կանդնած լինին: Զհ 34:




Զհ 34.

Իսկ եթէ երկրի մակերեսիթը՝ որի վրայ ուղում
ենք որոշել հեռացող նման առարկաների մասշտաբը.
թեր է, այն ժամանակ պէտք է որոշենք նախ առաջին
գծի վրայ եղած առարկայի չափը, յետոյ թեր գծեր տա-
նելով գէպի հեռակէտը (հորիզոնից վերև կամ ներքև,
նայելով մակերեսիթը գէպի ցած է գնում թէ գէպի բարձր.
§ 13) պէտք է տեղ որոշենք նոյն այդ թեր գծերի միջև:

Օրինակի համար հարկաւոր է մեզ որոշել Ա. Ե
մարդու հասակը (Ճհ 35) որ բաւական խոր է և բարձ-
րանում է վերև, նախ պէտք է նրա հասակի գծերը

միացնենք տեսողութեան կենտրոնին, յետոյ դարիվե-
րի թեքութեամբ զուզահեռական գծեր տանենք գէպի
տում կանգնեցնենք մարդուն, որի մասշտաբը կը լինի
հաւասար առաջին գծում կանգնած Ա. Ե. մարդուն:
հաւասար առաջին գծում կանգնած Ա. Ե. մարդուն:



Զհ 35.

Եթէ պատկերի մէջ մարդը կանգնած է մի թմբի
կամ այլ բարձրութեան վրայ, նախ հորիզոնական գը-
կամ այլ բարձրութեան վրայ, նախ հորիզոնական գը-
կամ այլ բարձրութեան վրայ, և յետոյ մար-
ծով որոշում ենք այդ բարձրութիւնը, և յետոյ մար-
ծով բարձրացնում ենք նրա վրայ իր տեղի մասշտա-
բի համաձայն:

Բ Ա Փ Ա Յ Ա Խ Յ Ա Կ

Բ. ՄԱՍԻ

Հեռանկար—перспектива.

Գծային հեռանկար—линейная перспектива.

Օդային հեռանկար—воздушная перспектива.

Հայեցակետ—точка зрения.

Տեսողութեան ճառագայթներ—лучи зрения.

Տեսողութեան առանցք—ось зрения.

Տեսողութեան շրջան—поле зрения.

Ակնագիծ—глазная линия.

Պատկերային հարթութիւն—картина плоскость.

Անկիւնոգիծ—дюгоналъ.

Հորիզոն—горизонтъ.

Տեսողութեան կենտրոն—центръ зрения.

Նոյն է պլատոր կետ—главная точка.

Նոյն է ակնակետ—глазная точка.

Նոյն է հայեցակետը հորիզոնի վրա—точка зрения на горизонте.

Պատկերի հիմք—основание картины.

Նոյն է երկրագիծ—земная линія.

Տարածութիւն—разстояние, (дистанция).

Հեռակետեր—точки удаления.

Խորութիւն պատկերի—глибина картины.

Վանդակաւոր ցանց—квадратная сетька.

Միացման կետ—точка схода.

Գլխաւոր միացման կետ—главная точка схода.

Պատահական միացման կետ—случайная точка схода.

Պատկերային հեռանկար—картина перспективы.

Հեռանկարի մասշտաբ—перспективный масштабъ.

Յ Ա Ն Կ

§ 1. Ի՞նչ է հեռանկարը.

2. Հեռանկարի բաժանումը.

Ա. Սկզբնական գիտելիքներ հեռանկարի մէջ.

3. Հայեցակետ.

4. Տևողութեան շրջան.

5. Պատկերային հարթութիւն.

6. Հորիզոն.

7. Տևողութեան կենտրոն.

8. Տարածութիւն.

9. Հեռակետեր.

10. Խորութիւն.

Բ. Գծերը հեռանկարի մէջ.

§ 11. Ուղանայեաց գծեր.

12. Հորիզոնական գծեր.

13. Թեր գծեր.

14. Զուգահեռական գծեր.

Գ. Զերերը հեռանկարի մէջ.

§ 15. Քառակուսին.

16. Ուղանկիւնին.

17. Շրջանը.
18. Կանոնաւոր բազմանկիւնիներ.
19. Վանդկաւոր ցանց.

Դ. Մարմինները հեռանկարի մէջ.

- § 20. Խորանարդը.
21. Հատուածակողմը.
22. Բուրգը.
23. Գլանը.

Ե. Պատկերային հեռանկարը.

- § 24. Աեսեակի հեռանկարը.
25. Փողոցի հեռանկարը.
26. Հեռանկարի մասշտաբը.

Բառացուցակ.

Յ Ա Ն Կ
Ա Ռ Ջ Ա Ր Ի Ռ

Ա. Գծեր եւ անկիւններ.

- § 1. Ի՞նչպէս է ստացւում գիծը.
2. Գծերը քանի տեսակ են լինում.
3. Ուղիղ գիծը քա՞նի զիրք ունի.
4. Ինչպիսի գծերն են կոչւում զուգահեռական.

Անկիւններ.


5. Ի՞նչպէս է ստացւում անկիւնը.
6. Անկիւնները քանի տեսակ են լինում.

Բ. Զ Ե Ւ Ե Ր

- § 7. Ի՞նչպէս է ստացւում ձեր.
8. Ձերը քանի տեսակ են լինում.
9. Եռանկիւնիները քանի տեսակ են լինում.
10. Քառանկիւնիները քանի տեսակ են լինում.
11. Բազմանկիւնիները քանի տեսակ են լինում.
12. Շրջանի մասին.
13. Կանոնաւոր բազմանկիւնիներ.

Բ. Պարզ մարմիններ.

14. Ի՞նչ է մարմինը.
15. Մարմինները քանի կարգի են բաժանվում.
16. Ուղղաձև մարմինների գլխաւորները որոնք են.



17. Կորածկ մարմինների գլխաւորները որոնք են.
18. Մարմինները բաց դիրքով:

Դ. Կարենը զիտելիքներ:

- § 19. Գծեր, անկիւններ, ձևեր և մարմիններ չափելը.
20. Մասշտաբ և յատակագիծ.


Բառացուցակ.



ԲԱՐԱԿԱՐԱԿԱՆ

Ա. ՄԱՍԻ.


- Գծագրութիւն—черчение,
Նկարչութիւն—рисование,
Գծանկար—чертежъ,
Նկար—рисунокъ,
Պատկեր—картина,
Կէտ—точка
Գիծ—линия,
Ուղիղ գիծ—прямая линия,
Կոր գիծ—кривая линия,
Կոտրատուած (բեկեալ) գիծ—ломанная линия,
Խառնակ գիծ—смѣшанная линия,
Քանոն—линейка,
Հորիզոնական գիծ—горизонтальная линия,
Հարթաչափ—ватерпасъ,
Ուղղաձիգ գիծ—вертикальная линия,
Ուղղահայեաց—периентикуляръ,
Կափիչ կամ կապարալար—отвѣсъ,
Թեր գիծ—наклонная линия,
Զուգահեռական գծեր—параллельныя линии,
Անկիւն—уголъ,
Գագաթ—вершина,
Կողմ—сторона, бокъ,
Վրունք—бедро,
Հարկան կամ կից անկիւններ—сосѣдніе или смѣжные
углы,
Ուղիղ անկիւն—прямой уголъ.



Բութ անկիւն—туной уголь,
Սուր անկիւն—острый уголъ.
Ուղանկիւնաչափ—угломѣръ, угольникъ.
Զե—фигура.
Եռանկիւնի—треугольникъ.
Քառանկիւնի—четыреугольникъ.
Բազմանկիւնի—многоугольникъ.
Հնգանկիւնի—пятиугольникъ.
Վեցանկիւնի—шестиугольникъ.
Ութանկիւնի—осмугольникъ.
Ուղանկիւն եռանկիւնի—прямоугольный треугольникъ.
Բութանկիւն եռանկիւնի—тупоуголь. треугольникъ.
Սուրանկիւն եռանկիւնի—остроугольный треугольникъ.
Հաւասարաբունք եռանկիւնի—ровнобедерный треугольникъ.
Հաւասարակողմ եռանկիւնի—равносторонний треугольникъ.
Անկանոն քառանկիւնի—неправильный четыреугольникъ.
Հիմք—основание.
Բարձրութիւն—высота.
Քառակուսի—квадратъ.
Ուղղանկիւնի—прямоугольникъ.
(նոյն է ուղղանկիւն քառանկիւնի)—прямоугольный четыреугольникъ.
Անկիւնագիծ—погональ.
Շեղական կամ շեղանկիւնի—ромбъ.
(նոյն է շեղանկիւն քառակուսի).
Գովանեռակողմ—параллелограмъ.

Սեղանակերպ, տրապեզաձև—трапеция.
Անկանոն բազմանկիւնի—неправильный многоугольникъ.
Կանոնաւոր բազմանկիւնի—правильный многоугольникъ.
Շրջան կամ կոլոր—кругъ.
Շրջագիծ—окружность.
Կարկին—циркуль.
Կենտրոն—центръ.
Շառաւիզ—радиусъ.
Տրամագիծ—диаметръ.
Լար—хорда.
Աղեղ—дуга.
Համակենարդն շրջաններ—концентрические круги.
Չուածածի—оваль.
Չուածիք—эллипсисъ.
Հապանակաձև—спираль.
Խիունչաձև—улиткообразный завитокъ. валота.
Ներքնագիծ բազմանկիւնի—вписан. многоугольникъ.
Արտագիծ բազմանկիւնի—описанный многоугольникъ.
Ներգծել—вписать.
Արտագծել—описать.
Պարագաճներ—простая, геометрическая тѣла.
Ուղղաձև մարմիններ—прямолинейная тѣла.
Կորածի մարմիններ—криволинейная тѣла.
Խորանարդ—кубъ.
Քառանկիւն հատուածակողմ—четырехгран. призма.
(նոյն է քառակուսի հատուածակողմ)—квадратная призма).

Եռանկիւն հատուածակողմ—трехугольная призма.
(Նոյնն է և եռանիստ հատուածակողմ—трехгранный
призма.
Բազմանկիւն հատուածակողմ—многоуголь. призма.
Ուղանկիւն հատուածանիստ—прямоугольный па-
раллелопипедъ
Կողմ, *նիստ*—грань, сторона.
Մակերեսը—поверхность.
Բազմանիստ—многогранникъ.
Բուրգ—пирамида.
Եռանիստ բուրգ—трехгранныя пирамида.
Բազմանիստ բուրգ—многогранная пирамида.
Գլան—цилиндръ.
Կոն—конусъ.
Գունտ—шаръ.
Կիսագունտ—полушаріе.
Երկարութիւն—длина.
Լայնութիւն—ширина.
Բարձրութիւն—вышина.
Խորութիւն—глубина.
Աստիճան—градусъ.
Բովէ—минута.
Վայրկեան—секунда.
Անկիւնաչափ կամ աստիճանաչափ—транспортиръ.
Զափագիծ, մասշտաբ—масштабъ.
Յատակիծ կամ մակարդակ—планъ.
Ճակատ (*շինութեան*)—фасадъ.
Քարտեզ—карта, ландкарть.
Համեմատական կարկին—пропорциональный циркуль.
Բաժանարար կարկին—ділитательный циркуль.



ՀՀ Ազգային գրադարան



NL0296963

ԱՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

Նոյն հեղինակի հետեւնալ դասագրքերը.

Գծագրութեան օրինակներ. տարրակ. զըպ-
րոցների համար. տեսրակ Ա. Ուղիղ գծեր 20 կ.

Գծագրութեան օրինակներ. տարրակ. զըպ-
րոցների համար. տեսրակ Բ. Կոր գծեր . 20 կ.

Գծագրութեան օրինակներ. տարրակ. զըպ-
րոցների համար. տեսրակ Գ. պարզ գծա-
նկարներ. զոյներ 35 կ.

**Վայելչագրութիւն և գեղագրութիւն տար-
րակ.** զասընթաց պարզ գրութիւն (տես. ա) 40 կ.

**Վայելչագրութիւն և գեղագրութիւն միջին
զասընթաց.** կահօնաւոր և վայելուչ գրու-
թիւն (տեսր. բ.) 40 կ.

**Վայելչագրութիւն և գեղագրութիւն բար-
ձըր.** զասար. համար. (տեսր. գ.) շքեղ
գրութիւն 40 կ.

Գծագրութիւն և նկարչութիւն. տարրական
զասընթաց. մասն Ա. Գծեր և անկիւններ,
ձեր, մարմիններ 20 կ.

Գծագրութիւն և նկարչութիւն. տարրական
զասընթաց մասն Բ. Հեռանկար (պերս-
պեկտիվա)

Գծագրութիւն և նկարչութիւն. տարրական
զասընթաց մասն Գ. Մտուելներ և զոյներ. 50 կ.

Գլխաւոր պահեստը «Գուտանաբերդ» դրավաճա-
ռանոցում:

Հեղինակի հասցէն՝ Տիֆլիսъ, поcht. ящ. 133.